ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՂԱՎՆԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ / / Վ. Ներսիսյան
/ 01 / Սեպտեմբեր /2023թ.

ԴԱՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2023-2024 ուսումնական տարի

Աշակերտների հետ դաստիրակչական աշխատանքների
կազմակերպիչներ՝
Սարգսյան Երանուհի, Հակոբյան Լուսինե

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքային գործառույթները՝

1) **Կազմակերպել** սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցում դասղեկների հետ.
2) **Մասնակցել** հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը.
3) **Կազմակերպել** սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով սովորողներին օգնություն ցույց տալու համար.
4) **Ձևավորել** սովորողների մեջ պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստում նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակում մարդասիրություն և հայրենասիրություն.
5) Հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական **օգնություն ցույց տալ** դաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու համար.
6) **Աշխատանք է տանել** սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը.
7) **Մասնակցել** հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, սովորողների առաջադիմության և վարքի ընթացիկ վերահսկմանը.
8) **Կազմակերպել** ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը.
9) **Մասնակցել** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը.
10) **Պահպանել** Հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
11) **Համագործակցել** ծնողների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները

Հաստատության դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին և կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

1. ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, իր պաշտոնային պարտականություններին վերաբերող նախարարության համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,
2. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները,
3. աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության կանոնները, մինչբժշկական օգնության հիմունքները, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները.

Որակավորման նախադրյալ պահանջները

Հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ մանկավարժական որակավորմամբ։

N	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Պատասխանատու Անձ	Նշումներ
1.	2022-2023 ուստարվա նախապատրաստական աշխատանքներ՝ Սեպտեմբերի մեկի կապակցությամբ	Օգոստոսի 20-31	ԴԱԿ	
2.	«Գիտելիքի և դպրության օր», միջոցառում՝ «Առաջին զանգ» խորագրով	01.09.23թ.	ԴԱԿ	
3	Կազմել հիշարժան օրերի և տոնակատարությունների գրաֆիկ	02-10.09.23թ.	ԴԱԿ	
4.	Դասարանական-աշակերտական խորհրդի ընտրություններ	Սեպտեմբեր	դասղեկներ ԴԱԿ	
5.	Կազմակերպել աշակերտական խորհրդի և նախագահի ընտրությունների անցկացումը	Սեպտեմբեր	ԴԱԿ	
6.	Սովորողների մոտ ձևավորել պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը, դաստիարակել մարդասիրություն, աշխատանք տանել սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների պահպանման ուղղությամբ	Տարվա ընթացքում	ԴԱԿ	
7.	Դասղեկական աշխատանքների բարելավում: Դասղեկական ժամերի թեմատիկայի նպատակային ընտրություն՝ ելնելով սովորողների տարիքային առանձնահատկություններից	Սեպտեմբեր	ԴԱԿ	
8.	Անցկացնել սովորողների ամենօրյա հաճախումների հաշվառում՝ ուշադրության կենտրոնում պահելով անհարգելի ուշացում-բացակայությունները	Տարվա ընթացքում	ԴԱԿ	
9.	Հետևել աշակերտական և ուսուցչական հերթապահության աշխատանքներին	Տարվա ընթացքում	ԴԱԿ	
10	Մասնակցել հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի, սովորողների առաջադիմության և վարքի	Տարվա ընթացքում	ԴԱԿ	

	ընթացիկ վերահսկմանը			
11.	Ստեղծել դասարանական անկյուններ	Սեպտեմբեր-հոկտեմբեր	ԴԱԿ ԱԽ ԴԱՍՂԵԿՆԵՐ	
12.	22 անկախության 31ամյակ	21.09.2023	ԴԱԿ	
13.	44-օրյա պատերազմի նահատակների հիշատակի օր. մոմավառություն	27.09.2023	ԴԱԿ ԱԽ	
14.	Համագործակցել դպրոցի բոլոր օղակների հետ	Տարվա ընթացքում	ԴԱԿ դասվար-դասղեկներ	
15.	Աջակցել տնօրենությանը՝ հնարավորության սահմաններում ապահովել սոցիալապես անապահով, զոհվածների ընտանիքների երեխաներին անվճար դասագրքեր տրամադրելու գործում	Տարվա ընթացքում	ԴԱԿ դասղեկներ	
16.	Ապահովել աշակերտների ընդգրկվածությունը դպրոցական խմբակներում	Տարվա ընթացքում	ԴԱԿ	
17.	Ուսուցչի օր. «Շնորհավո՛ր տոնդ, սիրելի՛ ուսուցիչ»	05.10.2023	ԴԱԿ ԱԽ	
18.	Կազմակերպել սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները	Տարվա Ընթացքում	ԴԱԿ	
19.	Լույս ընծայել պատի թերթ՝ «Ստեղծագործում են սովորողները» խորագրով	Տարվա Ընթացքում	ԴԱԿ դասղեկներ	
20.	«Ա» տառի շնորհանդես	Հոկտեմբեր	Դասվար ԴԱԿ	
21.	Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը	Տարվա Ընթացքում	ԴԱԿ	
22.	«Ուշ աշնան երգը» խորագրով միջոցառում	Նոյեմբեր	ԴԱԿ դասվարներ	
23.	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր. մոմավառություն	07.12.2023	ԴԱԿ	
24.	ԱԽ նիստ, նախապատրաստվել Ամանորյա տոնահանդեսին	Դեկտեմբեր	ԴԱԿ ԱԽ	
25.	Ամանորյա միջոցառում	24-26.12.2023	ԴԱԿ/ԴԱՍՎԱՐՆԵՐ	

26.	Հետևել աշակերտների հաճախումներին	Տարվա ընթացքում	ԴԱԿ Դասվար-դասղեկներ	
27.	1-ին կիսամյակի կատարած աշխատանքների ամփոփում	Դեկտեմբեր	ԴԱԿ	
28.	Հայոց բանակի օր	28.01.2024	ԴԱԿ Դասղեկներ	
29.	Շախմատի դպրոցական մրցաշար.	Փետրվար	ԴԱԿ	
30.	ԱԽ նիստ. Կազմել մայրենիի տոնին նվիրված միջոցառմա նպլան, փետրվար ամիսը Հայտարարել մայրենիի միամսյակ	Ամսվա Ընթացքում	ԴԱԿ ԱԽ	
31.	Գիրք նվիրելու ավանդական արարողություն նվիրված Հովհ. Թումանյանի ծննդյան օրվան:	19.02.2024	ԴԱԿ ԱԽ	
32.	Միջոցառում նվիրված գարնան տոնին	Մարտ	ԴԱԿ Դասղեկներ	
33.	Այցելություն պատնամշակութային հուշարձաններ	Տարվա ընթացքում	ԴԱԿ Պատմ. Ուսուցիչ	
34.	Միամսյակ. Կանանց տոն, Մայրության և գեղեցկության տոն	08.03.2024 07.04.2024	ԴԱԿ ԱԽ	
35.	Պոեզիայի օր	21.03.2024	ԴԱԿ	
36.	Համադպրոցական շաբաթօրյակ	Ամսվա ընթացքում	ԴԱԿ ԱԽ	
37.	Կատակի օր	01.04.2024	ԴԱԿ ԱԽ	
38.	Քառօրյա պատերազմ. մոմավառություն	02.04.2024 06.04.2024	ԴԱԿ Դասղեկներ	
39.	Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր.	Ամսվա ընթացքում	ԴԱԿ ԱԽ	
40.	Աշխատանքի և աշխատավորների միջազգայինօր	01.05.2024	ԴԱԿ ԱԽ	
41.	Մայիսյան հաղթանակերին նվիրված միջոցառումներ.	Մայիս	ԴԱԿ ԱԽ	
42.	«Վերջին դաս» ավանդական միջոցառում	25-27.06.2024	ԴԱԿ	
43.	Աջակցել քննական շրջանի աշխատանքներին	Մայիս	ԴԱԿ	